<<Ակադեմիական>> ավագ դպրոց

11$^{3\text{-}\text{ր}\text{դ}}$ դասարան

Դասղեկ՝ *Ա. Գ. Մկրտչյան*

2022-2023 ուստարի

Դասարանը բաղկացած է 30 աշակերտից՝ 18 տղա և 12 աղջիկ: Դասարանի մեծամասնության առաջադիմությունը բարձր է: Կան սպորտով զբաղվողներ, որոնք ունեցել են հաղթանակներ:

Դասարանը համերաշխ է: Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Աշակերտները շփման խնդիրներ չունեն, նրանք ջերմ են, ընկերասեր, հարգում են իրենց ուսուցիչներին, սիրով մասնակցում են կազմակերպված միջոցառումներին:Կարելի է ասել, որ ստեղծված է առողջ և ջերմ մթնոլորտ:Ձևավորվել է իբրև համախմբված դասարան:

Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ ուսումնա-դաստիարակչական աշխատանքները.

1) Առանձնակի ուշադրություն դարձնել կարգապահությանը, դասարանի մաքրությանը և գույքի պահպանմանը:
2) Դասարանական կոլեկտիվի կազմակերպմանը և համախմբմանը:
3) Մշակել սեր աշխատանքի նկատմամբ:
4) Քննարկման առարկա դարձնել անկարգության, դասերից ուշացումների, անհարգելի բացակայությունների հարցը:
5) Հետևել աշակերտների ինքնուրույն գործելու կարողությանը:
6) Կազմակերպել զանազան էքսկուրսիաներ:
7) Ձրույցների միջոցով դաստիարակչական աշխատանք կատարել դպրոց-ընտանիք միասնական կարևորության մասին:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն

Զրույցների միջոցով մշակել հոգևոր դաստիարակություն. այն է՝ ծանոթանալ հայկական մշակույթին: Սերմանել սեր ընթերցանության նկատմամբ: Կարդալ գեղարվեստական գրքեր: Կազմակերպել կոլեկտիվ քննարկումներ կարդացած գրքերի շուրջ և ուշադրությունը հրավիրել գաղափարական բովանդակության վրա:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտներին տանել թատրոն, կինո, ցուցահանդես, տեսարժան վայրեր, ուր կծանոթանան մեր մշակույթի գանձերին: ԴՐանցով նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակը մշակելուն, զարգացմանը:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Հաճախակի զրույցներ կազմակերպել հայրենասիրության թեմայով: Նշել բանակի դերը երկրի գոյապահպանման հարցում: Կազմակերպել `քսկուրսիաներ «Եռաբլուր», «Ծիծեռնակաբերդ»: Պատմել Հայրենական պատերազմի և Արցախյան գոյամարտի հերոսների մասին: Պատմել մեր դպրոցի զոհված ազատամարտիկների մասին:

Ֆիզիկական դաստիարակություն

Հետևել, թե ինչպես են մասնակցում ֆիզկուլտուրայի դասերին, ով ինչ սպորտ խմբակի է մասնակցում, քաջալերել՝ բացատրելով, որ ֆիզ. դաստիարակությունը նախ և առաջ առողջություն է:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների գիտակցությունը հասցնել այն մակարդակին, որ իրենք հասկանան և կարողանան կատարել իրենց պարտականությունները. մաքրեն դպրոցի շրջակայքը, դասարանը: Տանել զրույց «Ով աշխատի, նա կուտի» թեմայով:

Բնապահպանական դաստիարակություն

Սերմանել երեխաների մեջ սեր դեպի բնությունը: Այցելել բուսաբանական այգի: Օգնել դասարանում ստեղծել կանաչ անկյուն: Հասկացնել, որ կանաչապատման դերը մարդու առողջության հարցում ունի մեծ նշանակություն: Ուստի կանաչ տարածքի նկատմամբ ուշադրությունը և խնամքը յուրաքանչյուրիս գործն է:

Դպրոց-ընտանիք կապը

Ամրապնդել ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ՝ քննարկելով դասարանին և դպրոցին վերաբերող յուրաքանչյուր հարց: Ծնողը պետք է պատրաստ լինի օգնելու դպրոցին, դրանով իսկ օգնած կլինի իր երեխային:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը
	I կիսամյակ	
1	Գիտելիքի օր	08.09.22 թ.
2	Ինչպես ապրել կյանքը	13.09.22 թ.
3	Հայաստանի այն վայրերը, որտեղ կուզեի լինել	15.09.22 թ.
4	Զրույց <<Անկախության օրվա առիթով>>	22.09.22 թ.
5	Դժվարություններ,որոնց բախվում եմ	29.09.22թ.
5	Արտագաղթը չարիք է	06.10.22 թ.
6	Դժվարություններ,որոնց բախվում եմ	13.10.22թ.
7	Ուր եմ գնալու սովորելու	20.10.22թ.
8	Անկեղծ ու ազնիվ հարաբերություններ մեր դասարանում	10.11.22թ.
9	Սպորտով զբաղվելը նորաձևություն է թեառողջության գրավական	17.11.22
10	Լավ և վատ բնավորություն	24..11.22թ.
11	Հուզող հարցերի քննարկում	28.11.22
12	Ով է իմ ընկերը	01.12.22
13	Երկրաշարժի հիշատակի օր	08.12.22թ.

14	Ինչպես հաղթահարել ծուլությունը	15.12,22
	II կիսամյակ	
1	Բանակի օր	27.01.23թ.
2	Տյառնընդառաջ	09.02.23թ.
3	Գրքի տոն	17.02.23թ.
4	Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները	24.02.23թ.
5	Մարտի 8	03.03.23
6	Իմ երազանքներն ու նպատակները	10.03.23
7	Ձմեռային օլիմպիական խաղեր	17.03,23
8	Ինչ են պատմում ընտանեկան լուսանկարները	31.03,23
9	Ելույթ նվիրված մայրության տոնին	07.04,23
10	Սատ սովորությունների հետևանքները	14.04,23
11	Ելույթ Եղեռնի զոհերի հիշատակին	21.04,23
12	Ինչպես հասնել հաջողության	28.04.23
13	Ելույթ նվիրված մայիսի 9-ին	05.05,23
14	Հայաստանի մարդկանց կյանքի պատմ.	12,05.23
15	Ինչպես պայքարել անտարբերության դեմ	19.05.23